

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ամանորի և Ս. Ծննդեան տօներուն առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ եկեղեցւոյ Սրբազան Պետերուն յղուած են հետևեալ շնորհաւորական հեռագիրները. –

Երուսաղէմ, 24 Դեկտեմբեր 1982

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց
Ս. Էջմիածին

Նոր Տարւոյ և Ս. Ծննդեան տօներու բարեբաստիկ առիթներով, խոնարհաբար կը ներկայացնենք Ձերդ Սուրբ Օծութեան մեր և Սրբոց Յակոբեանց Միաբանութեան սրտագին շնորհաւորութիւնները, խնդրելով Բարձրեալն Աստուծմէ որ շնորհէ Ձեզ յաջողութիւններով լի երկար և առողջ կեանք, և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին անսասանութիւն և բարգաւաճում։

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 24 Դեկտեմբեր 1982

Նորին Սրբութիւն
Յովհաննէս-Պօղոս Բ. Պապ
Վատիկան

Ս. Ծննդեան և Նոր Տարւոյ բարեբաստիկ առիթներով, յարգանօք կը ներկայացնենք Ձերդ Սրբութեան մեր սրտագին շնորհաւորութիւնները, մաղթելով Ձեզ շարունակական առողջութիւն և Ձեր մեծ եկեղեցիին՝ բարգաւաճում։ Թող Ամենակարողն Աստուած յաջողութեամբ պսակէ Ձեր բարի ջանքերն ու ծրագիրները։

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 24 Դեկտեմբեր 1982

Ն. Ամենապատուութիւն Պիմէն
Պատրիարք Համայն Ռուսիոյ
Մոսկուա

Ս. Ծննդեան և Ամանորի առիթներով, կը ներկայացնենք Ձեզ մեր եղբայրական և ջերմ շնորհաւորութիւնները, սրտագին մաղթանքներով Ձերդ Սրբութեան առողջութեան և բարգաւաճ գործունէութեան համար։

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

digitised by A.R.A.R.@